1/. «ԻՓԻԷՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի, բավարարել.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարի 26.04.2024 թվականի թիվ 3177-Ա որոշումը՝ թիվ ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/19 ընթացակարգի շրջանակներում «ԷՓԻԷՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, ճանաչել անվավեր:

2/. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքից հօգուտ «ԻՓԻԷՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես Հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

3/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Հովհաննես Ղազարյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am